ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

ՀՈՂՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «ԱՐԱՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քաջարան» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 46.617 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էներգոտեխնիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Էներգոտեխնիկա-1» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 46.617 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերության «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 46.617 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2022թ.